ՆԿԱՐԱԶԱՐԸ ՄԻՆԱ ՋՈՒՅԱՆ

Հիսուսի հետևորդները
Պապուա Նոր Գվինեայում

Ինչպե՞ս է Էրվինը հետևում Հիսուսին

Էրվինը հետևում է Հիսուսին՝ օգնելով իր քաղաքի տարեցներին: Նա օգնում է մաքրել նրանց բակը և ուտելիք է տանում նրանց: «Ես ինձ երջանիկ եմ զգում, երբ օգնում եմ նրանց: Ես ցանկանում եմ ավելի շատ օգնել», - ասում է նա:

Էրվինը հետևում է Հիսուսին նաև աղոթելով Երկնային Հորը: «Երբ ես աղոթում եմ, զգում եմ, որ Աստված ինձ հետ է», - ասում է նա:

Էրվինը աղոթում էր Երկնային Հորը և խնդրում էր, որ օգնի իր ընտանիքին հավերժ միասին լինել: Էրվինը և իր ընտանիքը գնացին Տոնգայի տաճար՝ կնքվելու որպես ընտանիք: Նա ասում է. «Ես զգացի Հոգին տաճարի ներսում: Այնտեղ շատ խաղաղ էր ու հանգիստ»: ●

Էրվինը և նրա ընտանիքը Նուկուալոֆայի (Տոնգա) տաճարի մոտ:

Դուք նույնպես կարող եք հետևել Հիսուսին:

Նշեք որևէ բան, որ դուք արել եք՝ Հիսուսին հետևելու համար: Գրեք և պատմեք մեզ: Դարձերեսի շապիկին կարող եք տեսնել, թե ինչպես անել դա:

Էրվինի մասին

ՏԱՐԻՔԸ. 7

ԱՊՐԵԼՈՒ ՎԱՅՐԸ. Պապուա Նոր Գվինեայի կենտրոնական նահանգ

ԼԵԶՈՒՆԵՐԸ. անգլերեն և տոկ պիսին (Tok Pisin)
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ. 1) Դառնալ օդաչու: 2) Լինել միսիոներ:

ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. պարել և ձուկ բռնել

ԸՆՏԱՆԻՔԸ. մայր, հայր, երեք ավագ եղբայր և մեկ ավագ քույր

Ի՞նչ է սիրում Էրվինը

ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. Երբ Նեփին նավ կառուցեց (տես 1 Նեփի 17-18)

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹ. Գյուղում հավաքվել ողջ ընտանիքով և միասին ճաշել

ՄԻՐԳԸ. Խնձոր

ԳՈՒՅՆԸ. կարմիր

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ՝. «Աստծո զավակն եմ» (*Children's Songbook*, 2)